

ՀԱՆԴԵՍ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԿՈՒԱՐՏՈՍԻ

Թերեւս ժԳ՝ զարուն մէջ գրաստուց համար ճամբայ մը շինած էին, որու հետքը տեսայ Ամսդեկի և Ուիլքերի մէջ, երեքէն մինչև հինգ մեզր լայն, ծածկուած էր ստուար որձաքարամբը, և ոտն առ ոտն կ'ընթանար գետնին երեսէն, ընդ դարս և ընդ ձորս, յածելով 'ի լեռանցամէջս, որոնք զծանծաղուտս, առանց մտադրելու հիւսից և գահավիժից, առանց հոգ տանելու ուղիղ գլծոյն, մեղմօրինակ, բոլորովին վաղընջական շինողութիւն մը: Անհնարին է ըմբռնել թէ ինչպէս ծանրաբեռն ջուրոց երկայնաձիգ կարաւանից կարող կ'ըլլային անցնիլ անտի, մանաւանդ այն տեղէն, որ նաև այսօրուան իսկ պնդակառաց համար երկիւղալի և վրտանդաւոր է, ուր կան Ուրիի ծերայն և Սատանայի կամուրջն: Միայն 1708ին Ռիբոյ Մորելլինի՝ Ուրիի ծերպը բացաւ, որ առաջ երեք մեզր բարձրութիւն չունէր, և լայնութիւնն երկուքէն քիչ մ'աւելի, այնպէս որ դժուարաւ մէջէն կրնար անցնուիլ: Քանի մահառիթ արկածը հաստատեցին սատանայի առասպելը, ահեղամուռն, և փրկփրալից Ռէյսի ժայռից մէջ, քանի որ դեռ անդնդոյն վրայ կախուած փայտեղէն ճամբան պահելու համար՝ հարկաւոր մեծ ծախքն չէր ստիպած 18,000 լիրայի ձախքն ընելու, այն նախնական կաժանը (galerie) շինելու համար:

Ապենինի քանի մ'ամսայի անցից վրայ տակաւին կրնանք ունենալ այն բիրտ և կորովի մարդկան գաղափարը, հաստող ամենայն քաղաքական չարագաց, և անձ նամատն կախարդութեանց՝ որը են լորեպանը: Գունդ դունդ բաժնուած՝

ոմանք կ'ընթանային յերկիրն իտալու, կան, այլը 'ի գերմանական, կէսօրուան միջոցները ժողովելով 'ի հնագոյն Հիւրանոցն: Այն ատեն հիմակուանէն տարբեր ջուրոց ցեղ մ'ունէին, աւելի հոգեկու, աւելի յաղթանդամ, և կարգէ դուրս բնական ազգամաք ճոխացեալ, զանոնք ծանրաբեռն կը բեռնաւորէին, զեղին մեծ լաթով մը բեռը ծածկելով, և անոնց վզէն զանդակ մը կախելով, զոր կը վերցնէին՝ ուր որ հիւսոյ վտանգը լլար: Կ'երթային մի ըստ միովէ, վասն զի ճամբան նեղ էր, բեռն աւելի լայն, և հարկ էր մէջ տեղէն քաշել: Այնպէս որ երբեմն հարիւրաւոր մեզր երկայն գիծեր կը ձևացնէին: Դաշնագրութեան արձանագիր մը կայ յ7 փետրուարի 1363ին, որով Միլանու ընկերութիւն մը այս կարաւանաց գործառուի մը հետ դաշն կը հաստատէ: Զուիցերիոյ զանազան բերոց փոխադրութեան համար, որուն կը սահմանեն մանրամասնեայ ամենէն առանձին հանդամանքն, ժամանակ, եղանակ, վտանգը, օգուտը:

Այսեան առևտրոց պատմութիւն կը զրույցէ, թէ որոնք եղան այս կերպով անցած վաճառքն: Պոնդեղէն կ'ըսէ, որ 1797ին անցան 'ի կողարտուսէ 12 հազար ձեռագործ կերպասէ բերոց բեռինք, բուրդ և բամբակ, 8500 պանրոյ, 3200 գինւոյ և ջրւոյ, 4550 ձիթոյ, բրինձ և այլ բեռը: Դարուս առաջին տարիներն կողարտոսի ճանապարհաւ եղած վաճառականութիւնն՝ պատերազմին պատճառաւ շատ կրեցրայց 1830ին ժամանակներն, միջին միամեայ բերքն 20 հազար բեռէն ա-

ւելի կը գտնենք: Վաճառականութիւնն կը նեղուէր յամենայն տեսակ բաժից և մաքսից, 'ի զանազանութենէ դրամաց, 'ի հաճոյից վարչութեանց, 'ի յանդերձութենէ աւագակաց, և յայլ բազում դժուարութեանց, զոր այսօր հազիւ կրնանք երևակայել:

Ուրիշ մէջ եղած Սէէտորֆի Լազարեանք, 1300ին առեւններն անցից զագածան վրայ տուն մը բացին, որ յետոյ Հիւրանոցն եղաւ: Ո՛վ չի յիշեր անոր խաղաղիկ ապաստանարանը, ուր կը բնակէին բողոքովին այլացեղ մարդիկ և կ'ուտէին Դոյիայի համեզահամ կարմրախայտ ձկուկները, և ծաղկաւէտ բարձրատափը՝ որուն վրայ կ'ամբառնայ, և ուր քանի մը կաթիլք անձրեղ կը հոսէ:



Ճինեւուա.

Լորքը թաղեց, և դարուն վերջերն եղած պատերազմունք աւերեցին զհիւանդանոցը, որուն հիւսն խնայեր էր: Ի 1834ին հիւրանոցն վերստին շինեցաւ ներկայի բնակարանը, 1867ին հօն մօտ պառկոյլ մը բարձրացաւ:

Այս ժամանակ Նաբոլէոն՝ Սեմբիոնի զարմանակերտ ճանապարհաւ՝ ցուցեր էր թէ ինչ կերպով լեռները կ'անցնէին: Ընդ մէջ 1817ի և 1823ի բաժանակից Մարտենիոյ, Աստրիոյ և զուգորական Նահանգաց վարչութեանց ընթացակցութեամբ, Սուրբ Բեռնարդոսի և Սըլուկայի ալպեան ճանապարհքը կը շինուէին: Այն ատեն նաև կուգարառսի մէջէն Նորաշէն ճանապարհ

Պրնա Դ.

ցընեն ընդ Հոսդանոս երեք ծովուց մէջ Դիոյիս և զՀաւնոս, անցնելով ճինեւուայի, Գոսդանոյի և Մաճիորէի լիճերը, և թանալով Աւինենի, Գոլանիոյ, Բաւիայի պարիսպքը: Հօս կուգար Ֆերրարիոյ պատրաստելու 1431ին Եկեղեցւոյ իշխանաց համար պատշաճ օթեանքը, որոնք կուգային Պաղլէայի ժողովոյն համար, Ֆետերիգոյ Պարբոմէոյ, կարդուսի խորհուրդը 'ի գլուխ հանելով, Նուրիսալ կրօնաւորաց (Oblat) կարգէն քանի մը քահանայ յաղարկեց հօն. և Ֆետերիգոյ Վիսգոնգի կարգինալն յարմարցուց Ուրիշ վարչութեան հետ՝ հօն երկու վեղարաւոր պահելու: Ի 1775ին, այսինքն 10ին կէս գիշերուն, հիւս մը հիւրանոցին հետ նաև զկրօնա-



Շղաւպախ.

մը բանալու հարկն աւելի երեցաւ, և յետ երկար և մանրախոյզ պատգամաւորութեանց, յաջողեցաւ 1830ին բաժնաւ զայն, ըստ պահանջանաց ժամանակին փութով կազմելով թղթատարական ծառայութիւնը: Թղթատարական ծառայութիւն մը 1460էն 'ի վեր պէտք էր ըլլալ հօն, երբ Էթլինկենցին Բեռնարդոս հանս կ'երթար Միլանու և Սուրբ կողարտոսի ճամբով 'ի Բաւարիայէ յԱւստրիոյ տաճար օրուան մէջ. և նաև 1531ին երբ կղեմէս Է Քարելի մէջ հոկտեմբեր 11ին հանդիպած պատերազմը, ուր Ուրիգոյ Չոլինկիոյ հերետիկոսական ընկեր էր, ամառն 22ին կը տնդեկանար: Յուրիկի ֆոն Մուրալ-

գոյի և Պետնացի Ֆիլէշի տետրը 1693ին շնորհեցաւ 'ի հինգ նահանգաց իտալական քորաւարառքիւնն, երեսուն տարուան համար, թղթատարն կը մեկնէր չորեքշաբաթի և շաբաթ իրիկան 'ի Յուրիկէ, և կիրակի կամ չորեքշաբաթի առաւօտն էր 'ի Միլան: Ֆիլէշը ընտանիքն այս արքունի հասը պահեց մինչև 1799, երբ բոլոր երկիրն հաստարակապետութեան ինկաւ: Անցորդաց տեղափոխութիւնն շատ աւելի ուշ կարգի գրուեցաւ. ամենայն կառայ վրայ հաղիւ երկու կամ երեք տեղեր կային, և Յուրիկէն Պեւլինցնաւ երթալու համար, որ հիմա միայն 10 ժամ է, ընդհանրապէս կարուոր էին 4, 5, 6 և նաև աւելի օրեր: Ստկայն առ սակաւ տակաւ նաև այս անցից վրայ, ինչպէս բոլոր Զուլիցերից մէջ, նոստալաց թղթատարական ծառայութիւնն, արժէգէնոց և անձանց համար այնպիսի կերպով յօրինեցաւ, որուն բազումք զարմացան, որ և լաւագոյն չէր կրնար ըլլալ, ուրանօր կարելի չէր երկաթուղի ունենալ:

Շատ ատրիններէ 'ի վեր մոտածուած էր՝ օղպեան մեծ գետնափոր անցքով մը՝ կառուցանել զայն Կոլարատոյի մէջէն, երբ այս նիւթոյս վրայ Բրուսիոյ երեսփոխանաց Խորհրդարանին մէջ 'ի Ֆին Սիպիլէ առաջարկեալ հարցապահանջում (interpellation) մը՝ բովանդակել բոսպիոյ մտադրութիւնը հօն դարձուց: Շատ տարիներէ 'ի վեր բազուած էին առաջին երկաթուղիքն, ոչ միայն յԱնգղիա, այլ և յայլ աշխարհ, երբ ճարտարապետն լա Նիգա կրիճիսններուն գաւառական Ժողովոց մէջ կը մերկանար իր ծրագիրը, նոր միջոցովն դնել 'ի հաղորդակցութեան գէլուսի և գհարաւ Եւրոպիոյ, և ստիպել առևտրոց մեծ ընթացքը անցնելու Զուլիցերիոյ մէջէն: Սակայն նահանգք և քաղաքացիք թանձր ընով կը նիւրհէին, և երկայն տարիներ ամենէն աւելի լուսաւորեալ և յառաջատես մարդիկ 'ի գուրադաղկեցիկն ընդգէմ՝ նախապաշարմանց, ընդգէմ՝ բնական և անտեսական գծաւարութեանց, ընդգէմ՝ այլոց պատ.

ճառոց, որ 'ի Զուլիցերի քան ուրիշ տեղ հաղորդակցութեան նոր միջոցներուն զարգացման հակառակեցան:

Հանդերձ այսու, լա Նիգա 3 յուլիս 1845ին լուգումանեոյ մէջէն երկաթուղի մը շինելու թողաւութիւնը կ'ընդունէր, և Սան Կալլոյի, Կրիճիսններու, Դիլինդի նահանգաց և սարտեան վարչութեան հետ նախընտայ դաշն մը դնելով, ձեռնարկութիւնը յաջողցնելու համար ընկերութիւն մը կը հաստատէր 'ի Դաւրին: Իսոյց այն նահանգաց 1846ին աղմուկն, իրենց վարչութեան անհատատութիւնն, և Եւրոպիոյ վիճակն անկատար թողուցին զգործը. յետագայ տարին Սոնտերպոլնտի պատերազմն ծագեցաւ, և 1848ին ամենայն Տէրութիւնք յետս կացին յոր և իցէ ձեռնարկութեան և վրդովեցան յայլ ամբոխալից խռովութեանց:

Երբ խաղաղութիւնն հաստատեցաւ և Զուլիցերիոյ Դանակցութիւնն աւելի անխախտ խառնալի վրայ պնդեցաւ, նոր վարչութիւնն դարձաւ մոտածութիւնը երկաթուղոյ ցանցի մը շինողութեան, և մի և նոյն ժամանակ իւրացուցման (expropriation) օրէնք մ'առաջարկեց, և այս նիւթոյս մէջ գաշաւորական ձեռնհասութիւնը սահմանեց, 'ի բոց բառնալու համար զգրծաւորութիւնս, որոնք որ և իցէ ձեռնարկութեան խափանար կրնային ըլլալ: Վննութեամբ և վիճարանութեամբ անցան 1850 և 1851 տարիներն, և այն ամաց մէջ է՝ որ ճարտարապետն Գուլէր, իր ալպեան անցից տեղեկութեան մէջ խօսելով, կը ցուցնէ որ կողարտոս և Սրլուկա քան ղլուգումանեոյ և զՍեմբիոն աւելի ընտրելադոյնք են, և լուկանոյի ճարտարապետն Լուգգինի ու լուլակի կ'առաջարկէ զկողարտոս շուգով բանալուն գաղափարը, իբրև ալպեան անցից մէջէն աւելի կեդրոնականն և դիպաւորն: Նոյն հետայն Ալպեան գանաղան անցից պաշտպանուց մէջ անհնարին պատերազմն սկըսաւ: Ի վերջ կոյս 1852ի կրիճիսններու նահանգն նորոգեց լուգումանեոյ թոյլ-

տուութիւնը. այլ քիչ յետոյ 'ի Լուսինա գումարեալ ութ Նահանգաց ժողով մը, վճռեց հաստատապէս կուգարտոսի անցքը, և Պապիկեային Սբայսէր կը ցուցնէր թէ ինչպէս այս դիմին ընտրելադոյն է վաճառականութեան ընդհանուր շահուց համար, ինչպէս նաև քաղաքագիտական և զինուորական նկատողութեանց համար, Գեոռալին՝ հաւատալ թէ այս կռիւն՝ քսան և աւելի տարիներու մէջ՝ որչափ հրաւարականութեանց, ճառից, զրով մաքառմանց առիթ ընծայից, Լուգումանայի գծին թողտուութիւնն, որուն հաւանեցաւ նաև Դիլինոյ, զոր բազում անգամ յիշկարածգեցին դաշնակից իշխանութիւնք, փութով ինկաւ, շինողութիւնը վրան առնող ծանրուկիւ ընկերութիւն մը ներկայանալով, ի դուր ձենովայի քաղաքատեսուչն, ընդ մէջ Գոիրայի և Գոսպանայի լճին ելլած գծին բացման ատեն՝ ի 1 յուլիսի 1858ին խօսած չքեղ ճառի մը մէջ, մաղթանք կ'ընէր Լուգումանայի բացման համար. որ ճիշդ այն տարիներուն մէջ դաշնաւորական մտքատուրք՝ կողարտոսի կըրկինէն աւելի բերք կու տային, քան միահամուռ կրիճիսնեան զանազան անցքերն, ցուցնելով որ ինչ ճամբայ պէտք էր բռնել:

Արդէն Չէնիգիոյի աշխատութիւնը յառաջիւր էին, երբ միտասան Նահանգք և հեղինակեան երկրութեւոյ երկու ընկերութիւնք գոհ կ'ըլլային խնդրելու 'ի 14 մայիսի 1860ին՝ ի դաշնակից իշխանութեանց, որ ուղղագրուի կողարտոսի ճանապարհն. Բայց նոյն տարւոյն մէջ մեծ դէպք մը կը կատարուէր, որ նաև ձեռնարկութեան վրայ վճռական ազդեցութիւն մը պիտի ներդրէր, այն է իտալիոյ միութիւնն. Արդարև նոյն տարւոյն մէջ կողարտոսի երկրութեւոյն համար դործադիր ընկերութիւն մը կը կազմուէր, և կը թախանձէր ըզկոման Գալուր 'ի նպատակ այոր գծի: Այլ մեծ պաշտօնեայն, ըլլալ որ միաբնուրիշ շատ բաներու զբաղած էր, ըլլալ որ փափագէր սպասելու Չէնիգիոյի

ձեռնարկութեան կատարածին, և առաւել քան դամենայն բուռական չհամորելով զնախընծայ քննութիւնները, խոստովական կերպով կը պատասխանէր: Բայց 1862ին երկրութեւոյիական ձեռնարկութեան մոլեգնութիւնն վրայ հասաւ, և ամենայն տեսակ ընկերութիւնք Դիլինոյի վրայ թափեցան, ինչպէս Դանայեայ անձրև մը՝ բերանինն միլիոններով լեցուած. մինչդեռ շատ ծանրախոհ մարդիկ տեսնելով այս թողտուութեանց որսողքը, միլիոնիկի մը շահով դայնա նորէն վաճառելու համար, անգաղար կը յեղձիկէին որ զկողարտոս ծախելուն ծրագիրն օգն ելեր, ամպոյ մէջ, երազ մ'էր: Այլ անհետ ըլլալով այս բոլոր թղթեայ շինուածք, կը մնային հաստատուն փաստերն յօգուտ գծին, և ասոնք նաև իտալական խորհրդարանին մէջ լայնատարր կուսակցութիւն մը կը գտնէին, մինչդեռ Դիլինոյի նահանգին վարչութիւնն չէր յաջողեր ելնել 'ի ծանալու, 'ի քննել զզանազան ծրագիրս, և առանց աշտուութեան անոնցմէ մին ընտրել, յաղթահարեալ 'ի զրկանաց, որոց ըստ հարկին պէտք էր հանդուրժել, ուրիշ Տէրութեանց և Նահանգաց հետ մէկտեղ:

Այս ժամանակ Չէնիգիոյի աշխատութեանց բարի կատարածն՝ յապաղումը խորտակելու մյուս մ'էր: Կողարտոսի ընկերութիւնն 1863ին աշնան մէջ ընդարձակեցաւ և ժողով մը՝ զումարեց՝ յորում՝ ներկայացան 15 Նահանգք, և երկրութեւոյ երեք մեծամեծ ընկերութիւնք: Այն ատեն դործոյն վերականգնութեան մէջ մտան Ալփրէտ էշէրի, Շէնքի, Շմիալլինի պէս մարդիկ, որոց աշունն կը նշանակէր որ ձեռնարկութիւնն նոր շրջանի մը մէջ կը մտնէր և պիտի շուանար ընդունելու նպատամասոյց և ազդոյ հաւանութիւնը:

Նոր հակառակութիւնք խնդրոյն որոշման արդեւ կ'ըլլային, առաջարկելով իտալիոյ մէջ Սթուկայի գիծն և Գաղլիոյ մէջ Սեմբիանի գիծը, իբրև մրցող կողարտոսի, երբ իրեն կ'երևէր թէ

յաղթանակը ապահովուցած ըլլոյ : Նախ կրիճիոններուն նահանգն պաշտպանեց կորովութեամբ՝ որով 'ի զուր ճգններ էր Լուգոմանեցիի յաղթանակին համար, և Ճինեւոսայի, Ֆաւտի նահանգներն, Վալլէղէ, Նէօշագէլ ջանացին երկրորդին վրայ մտագրութիւնը հաստատելու : Կրնայ երեւակայուիլ թէ որչափ աւելի կատաղաբար և խռճաւորնդս պատերազմն բորբոքիցաւ, քանի որ Պեռնայի նահանգն խնդրէն դուրս ձգեցաւ, 'ի պատճառս ինքնահնար ծրարագրի մը, հաշտարար ընդ մէջ կողարտոսի և Սեմրինի, բայց ցնորական 'ի գործադրութեան : Զուիցերիոյ, Իտալիոյ և հարաւային Գերմանիոյ օրագիրք

և պարբերական հանդէսը, Նուիրեյնի իրենց սիւնները հմտագոյն, հրաբորբոր, կամակոր վիճարարութեանց, և նախաձեռնարութեան խնդիրն քննուեցաւ իրեն բոլոր բազմադիմի կերպարանաց մէջ :

Սակայն կողարտոսի ընկերութիւնն մեծագոյն ծանրութեամբ և հիմամբ կ'աշխատէր, և աշխուռդին նիւթեր կը հրատարակէր լեբան երկրագիտական կազմութեան, իրեն ծակելուն կարեւոր եղած արուեստի գործոց, առևտրական շահույց միայ, որոնք ձեռնարկութեանէն յառաջ կու գային : Այլ բազումք կանդ կ'առնուին՝ ծակելուն համար երեսուն և աւելի ամաց կարևոր ըլլալուն



Պ Ե Ր Ն Ա .

գողափարին գիմաց, մինչդեռ ճիշդ Չէնիգիոյի համար ալ նոյնչափ կը զուշակէին, և թիրեա, առանց ճնշական օդոյ մեքենայից գործածութեան՝ բաւական չէին ըլլար : Բայց ստաի, Պէքհ և Կէրուիկ ճարտարապետներն, առաջին անգամ հաշուելով ժախտոց նախահաշիւը, 1864ին 110 միլիոնի հանեցին, որ ամենուն ահագին երկյաւ, և սակայն ահբուական : Գիծն՝ 97,200 մեդր երկայնութիւն մը պիտի ունենար, և ընդհակառակն 92,500ի ելաւ, 25 առ 1000 միամամբ, և 14,800 մեդր զեանաւոր անցք մը, որ 400 մեդր աւելի կարճ եղաւ և եօթն կամ անկէ վար աւելի

խոնարհ՝ այս առաջին նախագծին, քանի մ'անտարբեր փոփոխութեամբ, որոնք սակայն եղան նպատակ երկար և մանրագին քննութեանց :

Յիտալիա քննուեցաւ խնդիրն հետապօտութեան Յանձնաժողովոյ մը ձեռքը՝ խորութեամբ մը, անկողմնասիրութեամբ մը և ընդարձակութեամբ՝ ինչուան արժանի ըլլալու մեծամեծ գովեստից : Առանց մեծ կռուոյ չեղաւ՝ որ կողարտոսի գիծն նախամեծար համարուեցաւ մէկալ մրցակիցներէն, որ նաև յիտալիա հօրը և մեծաթիւ պաշտպաններ դատը էին : Բայց սակայն թուեցաւ թէ կողարտոս կրնար ըսուիլ ազգաց

մեծ ճանապարհէն, ընդ մէջ Պրեննէրի
և Չէնիդիոյի, առոր համար քան զայս
գերազանց . թէ՛ այն անցից համար
մարթ էր մեծագոյն վաճառականու-
թեան զարդացում մ'ունենալ, արուես-
տագիտութեամբ աւելի ծաղկաւէտ
աշխարհաց մէջ, և լաւագոյն զետեղե-
լոց: Սակայն կը վերջացընէր իմացընե-
լով՝ որ առանց Տէրութեանց և բաժա-
նակից քաղաքաց առատաձեռն նպաս-
տից, սոսկական գործառու ընկերու-
թիւն մը բնաւ երբեք պիտի չկարենայ
մտածութիւնը դարձունել 'ի կատարել
զգործն հսկայական:

Զօրավարն լա Մարմորայ, խորհրդ-
դոյն նախագահն, 'ի 27 փետրուարի

1866ին կ'իմացընէր Մամիանի կոմսին,
պաշտօնէի իտալիոյ 'ի Պեռնա, որ ի-
տալական վարչութեան ընտրութիւնն,
բայ 'ի հաւանութենէ խորհրդարանին,
կողարատի համար էր, յայտնելով որ
պատրաստ է իտալիոյ ինկած ծախքը
մատակարարելու: Այլ ընկերութիւնք
և սեղանաւորք՝ որ ուր և է ալպեան թղլ-
տութեան մը կ'անձկային՝ միայն թէ
կարենան անկէ շահ ընել, կեղծ աղ-
մուկ մը կը տածէին Նահանգաց մէջ,
որ կ'արգելուր վճռական եղրակացու-
թեան մը գալու, ժողովրդոց և վարչու-
թեանց միայ լքուցիչ ազդեցութիւն մը
ներգործելով: Բայց նաև Գերմանիա կը
միափեր իբրև թէ իր գործն չըլլայ. Պա-



ԼՈՒՃԵՐՈՆԱՎ.

տէն՝ ընդ մէջ կողարատի և Լուգումա-
նեոյի կը դեղնէր. վիւրդէմպէրկ ընտ-
րութիւն չէր ըրած. Բրուսիոյ զլխաւոր
քաղաքը, մանաւանդ յետ իտալական
մղման, որոյիչ նախամեծարութիւն մը
կը ցուցնէին կողարատի համար, պատ-
րաստք կրելու ձեռնարկութեւն բեռնիքը:

Պատերազմն 1866ին՝ ուրիշ անգամ
մ'ալ մէկդի գրաւ ալպեան անցից խըն-
դիրը. այլ յաջորդ տարին Պրեննէրոյ
երկաթուղոյն բացումն՝ ստիպեց զղաչ-
նակից վարչութիւնը դրդելու բաժանա-
կից նահանգները՝ որ գլխաւորաւն հառ-
տատուն բանակութեւն մը վտանգին՝

Զուիցերիոյ երեք մասանց մէջ՝ որոց աչք
կառուցեր էին՝ ալպեան զանազան ան-
ցից: Մի և նոյն ժամանակ Լուկանոյ-
ֆիասայ, և Լուգանոյ — Պելլինցոնա-
Պիասայ գծից թղլտութիւնն կը կա-
տարուէր, և Բրուսիա ալ ինքզինքը պատ-
րաստ կը ցուցընէր յանձն առնլու ծա-
խուց մէջ իրեն ինկած մասը, նախա-
մեծար ընտրելով զկողարատի: Այս
պէս յստակացեալ ջուրերը քաղաքա-
դիտութիւնն պղտորեց, և ռամկապե-
տական խռովութիւնն, որ մասնաւոր
րապէս քանի մը զուիցերական Նահան-
գաց մէջ տարածուեցաւ և անյաշու ը-

բաւ 1872ին սահմանողրական ծրու-
գիրը, քիչ մնաց որ վտանգի մէջ չնկնէ
'ի ձեռս բերած արդիւնքը, զայնս՝ որոնք
հաստատուն կ'երևեն: Երբ 'ի փոքր
նահանգաց և անոնց վարչութիւնէն մե-
ծագոյն արգելքն ծագեցաւ, Զուլիցերիոյ
արմատականը անկէ առիթ կ'առնուին
դաշնակից իշխանութեան ծաւալումը
ուզելու, և հակառակորդաց կ'երևէր
թէ կողարտուի երկաթուղին, այս պի-
տոյքը ցուցնելով և միաւորական միա-
բով ազդեցութիւն մը ներգործելով,
վտանգի մէջ կը դնէր Զուլիցերիոյ միաւ-
րութիւնը և ազատութիւնը:

Սակայն ուրիշ որոշիչ քայլ մը կ'առ-
նուր խնդիրն՝ 'ի ֆոն Սիպէլ ուսուցէ՝
'ի բրուսական խորհրդարանին՝ առաջ-
արկեալ հարցապահանջմամբ 'ի 27 փե-
տրուարի 1869: «Ալպեանց աշխարհին
նման վիթխարի » խնդիր մը չէր կրնար
լուծուիլ առանց իւրի միակամութեան
բաժանակից վարչութեանց մէջ և ա-
ռանց իրենց ընթացակցութեան: Եւ կը
ցուցնէր թէ ինչպէս կողարտուի եր-
կաթուղւոյն շինողութիւնն՝ Գերմանիոյ
համար առաջին կարգի անտեսական
կտրերը հարկ մ'էր, մինչդեռ նաև քա-
ղաքագիտական և միջազգային տեսու-
թեամբ ալ պէտք էր դարձունել առ-
այն մտադրութիւնը: Վաճառականու-
թեան պաշտօնեայն այնպիսի պատաս-
խան տուաւ հարցապահանջոյին, որ
կը վստահացնէր թէ բրուսական վար-
չութեան կողմանէ որոշումն ալ հետի
չէր: Յիշուի բրուսական պաշտօնեայն
'ի Պեռնա, 31 մարտի 1869ին, ծանու-
ցմամբ կը հրաւիրէր զդաշնակից վար-
չութիւնը՝ մտածելու պատեն ժամա-
նակը՝ Զուլիցերիոյ կեդրոնին մէջէն, ընդ-
մէջ Պրեննէրի և Գենիզիոյի, ալպեան
երկաթուղի մը շինելու, աւելի ուղղակի
կերպով գերմանիա և գիտալիա կցե-
լու համար: Նոյն օրը իտալիոյ պաշտօ-
նէէն, Մեքսիկայի կոմսէն, նմանօրինակ
ծանուցում մը կը ներկայացուէր, որ 'ի
Բիտաա եղաւ միանգամայն հզօրագոյն
և հեղինակաւոր պաշտպան կողարտու-
սի: Գիշ օր ետքը երրորդ ծանուցում


մը կը ներկայացընէր Պատեն, յայտա-
բարութեամբ՝ որ կողարտուէն դուրս
մտադրութիւնը ուրիշ տեղ չէր կրնար
հաստատուի, և 23 սեպտեմբերի նոյն-
պիսի ծանուցումն վերդէմպերկի վար-
չութիւնն կ'ընէր:

Այսպէս գործիքեան հանգոյցն հաս-
տատապէս կարուած էր, և նաև բա-
ժանակից փոքր նահանգք պէտք էին
վճարական շարժման մէջ ձգուիլ թաւա-
լիւ Գաշնակից վարչութիւնը ժողով մը
գումարեց 'ի Պեռնա, յորում իտալիոյ
համար նստան արժանապ. Մեքսիկայի,
Գորրենդի և Պիլիա, և ստորագրեցան
նախակարգ արձանագիրքն 'ի 15 հոկ-
տեմբերի 1871 ընդ վարչութե. Գերմա-
նիոյ: Այն ժողովոյն մէջ, թէպէտ և զա-
նազան Տէրութեանց առ ձեռնարկու-
թիւնն ընթացակցութեան նկատմամբ
սահմանիչ որոշում մը չհաստատուե-
ցաւ, այլ կարգեցան անոր շաւիղն, ա-
րուեստական կարեւորագոյն հանգա-
մանքն, շինողութեան եղանակն և ժա-
մանակն, և վերջապէս այն ամենայն,
որ կրնար, պէտք էր հասցընել ձեռն-
արկութեան կարևոր եղած դաշնաց
վախճանին: «Օժանդակութիւնն՝ զոր
պիտի հատուցանէին վարչութիւնը, հա-
շուեցաւ 85 միլիոն, և ասոնց 45 'ի հա-
շիւ իտալականին, 20 գուլիցերականին,
20 գերմանականին, 12 մարտի 1878ին
վերագրեւ համախմբութիւն մը աւել-
ցուց վրան 28 միլիոն, և խնդրեցան յի-
տալիոյ 10, 'ի Գերմանիոյ 10, 'ի Զուի-
ցերիոյ 8:

Ծանուցումը, խորհրդարանի վիճա-
բանութիւնը, իրողութիւնը, որոշումնը
որ այն ատեն յաջորդեցին, անսպասելի
պատմութիւնը են: Պատերազմն 1870-
71ին՝ յապաղանազ վերջին պատճառն
եղաւ, գերմանական վարչութեան ըն-
թացակցութիւնը ուշացընելով և հե-
վեանսին մտադրութիւնը այսր անգոր-
յածեցընելով: Այլ արդէն 2 ապրիլի
1871ին կողարտուի Բնկերութիւնն կը
պատրաստուէր ձեռնարկութիւնը սկը-
սելու, և 'ի 4 նոյեմբերի միջազգային
Յանձնաժողովն որոշակի կը գումարէր 'ի

լուսեռնա, անուանելով նախագահ զՍ. Էշեր, փոխանակ նախագահի զՅ. Զինկ և զՅ. Վեպեր և 'ի քարտուղար զՍ. Վաննէր: Իտալիա ունէր հօն երեսփոխան զարժանապատիւս Սէրվատիոյ, Պոմպրինի, Մենապրէա և Մորոսինի:

Այսպէս, յետ քսան ամաց նախապարտաւորական աշխատութեանց, բոլոր նակուածեանց, իրողութեանց, գործաւորաց և մեքենայից կ'ինկնէր դործն, որով 'ի 1 հոկտեմբերի 1872 կը սկսէին մեծ փողը (tunnel), կը բացուէին 1874ին գիշինեան երկու գիծերն՝ Լուկանոյ-Քիասոյ, և Լոգառնոյ - Պելլինցոնա - Պիասգա, երբ արդէն գծին վրայ աշխատութիւնքն արագապէս կը յառա-



Կամուրջ Սատանայի-

ջէին: Սակայն մինչև ցվերջ հակառակութիւնք չպակասեցան. վասն զի երբ Զուլիցերի 1878ին պէտք եղաւ որ օգնէ 8 միլիոն նոր օժանդակութեամբ մը, և գաշնակից վարչութիւնն անոր վրայ աւելցուց 4 ու կէս, բաժինը ընդ քուէիւ ժողովրդեան արկանելով, 278,734 նը պատաւոր և 115,574 հայառակ քուէ ելաւ, քուէներ որոնք քանի որ իտալիա և Գերմանիա ձեռնարկութեան օգտամատոյց եղբւր էին 85 միլիոնով, աւելի անկատար կը թողուին ղոյն՝ քան թէ կը կրէին այս վերջին բնուր:

Այսպիսի է այս մեծ միջազգային գծին պատմութիւնն, և քիչ թիւերով

լուսադրին կերպով կրնայ բացատրուիլ: Առաջին սահմանիչ ծրագրին մէջ՝ որ 'ի 1864, կողարտօսի երկաթուղոյն ծախքը կը նախահաշուէր 179 միլիոն ֆր.: Միջազգային ժողովն՝ որ 'ի 1869, աւելցուց Գոտենայցոյ-Քինոյ գիծն, այն թիւը 187 միլիոնի հասնելով, և հաշուեց իր 85 օգնութեան արոյց (subvention), 102 բազերու (action) և պարտաւորութեանց: Իտալիոյ սահմանեալ 45 միլիոններն հատուցան մասամբ 'ի Տէրու թենէն (24,573,990), մասամբ մը Վերին Իտալիոյ երկաթուղեաց Ընկերութեան (10 միլիոն), և այն քաղաքներէն և դաւառներէն՝ որք աւելի ուղղակի կերպով ձեռնարկութեանէն շահ ունէին (10,426,010): Ի Գերմանիա հատուցին 8,066,000 լիւրայ կայսերական վարչութիւնն, և 11,944,000 երկաթուղեաց Ընկերութիւնը: Ի Զուլիցերի 7,020,000 Հիւս.-Ռքեմս. կեդրոնական երկաթուղեաց Ընկերութիւնը, և 12,980,000 այլ և այլ նահանգք, յորս Դիլինոյ օգնեց 3 միլիոնով և փոքրն Ռերի՝ միով:

Բազերու և պարտաւորութեանց դրամազուխն երեք հաւասար մաս բաժնուեցաւ՝ իւրաքանչիւրն 34 միլիոնի. և ստորաբաժանեալ 34 միլիոնի բազերու՝ 6 առ հարիւր շահով՝ մինչև գծին բացումն, և 68 պարտաւորութեանց 5 առ հարիւր:

Կարելի չէ հօս բոլոր երևութեան գործողութեանց ետեւէն երթալ, որք կարևոր եղան ձեռնարկութեան կատարածին և կարգադրութեան համար: Բաւական է՝ որ 187 միլիոնաց վրայ, որոնք 'ի սկզբան բաւական կը համարուէին, աւելցան 40 ալ, այսինքն է 28 նոր օգնութեան արոյց, և 12 պարտաւորութեանց. և բայց աստի կարևոր եղան 12 միլիոնը, կէսն օգնութեան տուրք Զուլիցերիոյ և իտալիոյ և կէսն պարտաւորութիւնք, Չէնէրի լեռան երկաթուղոյն համար: Ոմեքը մէկտեղ կու տայ համազուտար ծախք մը 239 միլիոնաց, 119 օգնութեան տուրք, 34 բազերու, 86 պարտաւորութեանց:

Աշխատութեանց լիննալուն համար

տասն տարի չի գնաց, նախագուշակուած էն շատ աւելի շուտ ։ Եւ թէ որ ծախքն սուտ հանեց զյառաջատեսութիւնը և ստիպեցաւ ընկերութիւն կարգադրուիլ ճանապարհին ընթացից վրայ, այն աւելի նոր վրայ հասած աշխատութեանց համար էր, քան թէ հաշուոց պակասութեան ։

Դառնալով այսօր մտքը յաղթած դժուարութեանց, յիշելով հիւսերու բռնութեան տակ ջորեպանաց գնացած ուղին, ծամածուռ ճանապարհաց մէջէն դէպ ՚ի վար արշաւակի խոյսցեալ ճեպընթաց կառքն, չենք կրնար զսպել օրինաւոր գոռողութեան դժացում մը ։ Զիք ինչ մասկանացուաց դժուարին (Nil mortalibus arduum), քաջ իսկ կրնանք կրկնել այսպիսի յաղթութեանց առջեւ ։ Գիտութիւնն, որ դժուարագոյն կռուոց մէջ մեզի օգնութեան կը հասնի, ուրիշ լերան մ'ընդերքը փնռեկեց,

1 Sten Bertepesch : Die Gotthard-Bahn, Gotha 1881. — Wanner : Geschichte der Begründung des Gotthard-Unternehmens, Bern 1880.

որպէս զի այլ և այլ ժողովուրդք աւելի յաճախակի եղբայրական գրկակցութեամբ կարենան միմեանց մերձենալ, Զըլլայ որ քաղաքագիտութիւնն երբեք վրդովէ դիտութեան այս պայծառ յաղթանակը, և ընդ մէջ իտալիոյ և Գերմանիոյ բարեկամաց՝ միշտ մոռնէ, զոգցես Ալպեանց պտհապան հրեշտակ, ազգ մը՝ որ գիտցաւ արժանի ըլլալ այսպիսի կենդանի և հանրական սիրելութեանց, փոքր ազգ մը, որ կը ցուցնէ Եւրոպէի թէ ինչպէս կրնան ապրիլ կյոորդեալ եղբայրական դաշնաւորութեամբ՝ լեզուով, սովորութեամբ, հաւատով զանազանեալ ժողովուրդք, ընդ պահպանակաւ հասարակաց ազատութեան, ընդ հովանեաւ դարական հիմնադրութեանց, որ արժանի են ամենայն աշխարհաց բաձրաշուք մեծարարանաց ։

Ա. ՊՐՈՒՆԻԱՆԻ

— Տեղեկութիւնք, հաշուակէիք, և այլն, և այլն, Կոդաբառսի լեզուութեան ։

ՈՒՂԵՒՈՐՈՒԹԻՒՆ Ի ՊՈՄՊԷՅ ՀՆԴԿԱՍ

ՎԵՆԵՏԿԱՅ ԼՃԱԿԷՆ ՅՊՐԻՆՏԻԶԻ

Սուէդի անցրը բացուելն յետոյ, անգղիական շոգինաւուց դիմ մը զԱնգղիան՝ Ագրիականին ու Կարմիր ծովուն վրայէն՝ Հնդկաստանի հետ կապեց ։ Այս գծիս դըլուխը հաստատուեցաւ ՚ի Վենետիկ ։ Հոս ամեն եօթնեակ Անգլիացի ճանապարհորդաց բազմութիւն մը կը ժողովի ու դէպ ՚ի Սուէդ կը նաւարկէ ։ Ուսկից դարձեալ այլ և այլ շոգենաւերով՝ ոմանք ՚ի Հնդկաստան կ'ուղևորին, այլք յԱւստրալիա և ՚ի Ճավա, ՚ի Չին և ՚ի Ճարոն ։

Ի 1881 նոյեմբերի սկիզբները ինձ ևս փնտհեցաւ նոյն գծով Վենետիկոյ լճակէն ելլելով ուղևորելի ՚ի Հնդկիս ։ Սրդէն նոյն այս ամսուս յատուկ անձրեւային օրերը կանխեր անցեր էին, ու չորրորդ օրը զուարթ ու զեղեցիկ արեւով մը կը ծաւ-

գէր ։ Երկինք ապակեայ կը նմանէր ։ Այնպէս ջինջ ու պոյծառ էր, և օդն ալ թեթեւ ու ջերմ ։ Թող չորջանախի տեսարանը, որու զմայլելոցիչ հրապոյրն մարդու սիրտը կը զուարթացնէր ։ Լճակին խաղաղաւէտ ջրին մակերեսովք՝ պոյծառ արեւուն շողողացող ճառագայթներէն երփն երփն կը զուճաւորէր ։ Լերանց հիւսաւոր կոնքը՝ անուշ մանուշակագոյն ներկեալ, ամենաթեթեւ գոլորշիք մը քօղին մէջէն կ'արձանանային ։ Եւ անոնց երկու կողմէն նոյն գոլորշին սահելով՝ զհորիզոնը հրապուրիչ թեթեւ երանգով մը կը պատէր ։ Արեւելեան դին արեգը նուրբ գոլորշիքի մը մէջէն իւր ճառագայթները ցոլացնելով կարծես լճակին վրայ արծըթէ փուշոյ անձրեւ կը թափէր ։ Իսկ այն հոյակապ քաղա-